

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկեան կեանքը օրագրական լաբիւրինթոսի մը մէջ կը սահի. 'ի Նիւ-Եորք երբ մէկը Յունիսի գեղեցիկ առաւօտ մը ժաւր տանին 'ի վալ Սգրետէ կ'ուզենորի յարուարձանս քաղաքին՝ գետնայարկ և երկայնաչար պաշտօնատանց մէջ ուրիշ բան չի տեսներ՝ բայց եթէ շապկազգեստ մարդիկ, որք շարժական և որորոցանման բազմոցներու վրայ հանգչած, ուղքերնին գլուխներէն աւելի բարձր, լրագրոց սինակաց մէջ ընկըղմած են. ամենեկին ուշագրութիւն չի դներ լրագրին վերնագրին թէ արդեօք Դայմզ է թէ Ուորլտ, Հէրալտ, Սըն, Դրիպիւն, Մորնինկ ժուրնալ, Ինտըրենդէնտ, Ռեքորտէր, բնաւ փոյթը չէ. ճանապարհի վրայ հանդիպածներուդ մին կը ծխէ իսկ միւսն կը կարդայ, այս երկուքէն մին պէտք է ընէ անհրաժեշտ ամերիկացին. ուրիշ բան չի տեսնուիր բայց եթէ լրագիր, գլանիկ և յարդեայ գլխարկ :

Միջօրէին՝ ստորին քաղաքին ամեն ճաշարանք՝ լի են լրագրօք և գործի տէր մարդիկներով. ազնիւ ըմպելիք վաճառողաց սեղանին առջև միայն ճին և կամ՝ վիշքի արբողներ կանգ կ'առնուն, որոնք փոքր գաւաթին վերջին կաթիլները կլլած ժամանակ՝ աչքով ալ յետին ծանօթութիւններն և հեռագիրները կը լսփեն :

Երեկոյեան հինգերորդ ժամուն՝ արուարձանաց մէջ վերստին կը սկսի գործի անձանց մակընթացութիւնն, ինչպէս առաւօտեան դէմ՝ 'ի կեդրոնն քաղաքին. այս ժամանակ տպագրեալ թղթոյ գործածութիւնն այնքան մեծ է՝ որ քանի մը վայրկենի մէջ քաղաքին խճուղիներն կը կորսուին սպիտակ վերարկուի մը տակ. ահա կը տեսնես թրամուէյ մը, խոնկալ բազմամբոխ, ամէնն ալ յոտին կանգնած՝ զի բազմելու տեղ չի կայ, մէկ ձեռքով կառաց ձեղունէն կախեալ կաշեայ օղակները բռնած՝ իսկ 'ի միւսն օրագիր մը, որ կը ջանան հակառակ կառաց շարժման և ոստոստման ըստ կարելոյն մերձեցընել իրենց աչաց և կը կարդան, շարունակ կ'ընթեռնուն մինչև որոշեալ տեղերնին հասնին : Իսկ առկախեալ

երկաթուղեաց մէջ զոր գործունեայ և բազմազրաղ ամերիկացիք բաւական առենէ 'ի վեր միայն Լ տառիւ համառօտագրեր են՝ օրագրաց թիւը շատ աւելի է քան ճանապարհորդաց . իսկ եթէ կայարանն մ'իջնես՝ կառախմբին մէջ թողուցածներդ և կարգացածներդ ամէնն ալ անդ աչքիդ առջև կը տեսնես : Նախ քան զճաշ՝ պանդոկներու ամէն ճաշասրահներն , ծխասենեակներն և խաղասենեակներն լի են օրագրովք . թերևս միայն ճաշելու ժամանակ չեն կարգար ամերիկացիք , բայց ընդհակառակն օրագրաց պարունակութեան վրայ կը հակաճառեն . իսկ երեկոյեան դէմ՝ պատանեաց անհամար խումբ մը երեկոյեան հեռագրերը կը ծանուցանեն , և թատրոններու դրանց առջև բազմաթիւ լրագրաց երկրորդ կամ երեկոյեան տպագրութիւնը կը վաճառեն :

Նիւ — Երբք թէպէտ Լոստրայի բնակչաց չորրորդ մասն հազիւ ունի՝ սակայն իւր ամենօրեայ լրագրաց թիւն՝ նախընթացէն շատ աւելի է . իսկ օրինակք՝ 10, 000 էն մինչև 300, 000 և աւելի իսկ . Եւ այս բանս զարմանալի պէտք չէ թուի՝ նախընթացաբար մեր ըսածներն յիշելով . բայց թողունք Նիւ-Երբք և երթանք 'ի Ֆիլատէլֆիա , ի Շիգակո , 'ի Ուոշինկոն , և 'ի Չինչինսադի . — Նոյն իսկ երկաթուղոյն մէջ լրագրական ընթերցումը կը թագաւորէ . և զանազան դժերու մէջ գտնուած պարագա միջոցը՝ ճշացող և երբմն նաև լիր պատանիք կը ներկայացընեն ճանապարհորդին նարինջ , պանան , սեխ , անդդիական վիպասանութեանց խնայողական տպագրութիւնք և հուսկ յետոյ ամէն մեծութեամբ և ամէն գունով անվերջանալի լրագիրներ : — Եթէ ճանապարհի մէջ երկրորդական կայարան մը հասնիս՝ նոյն տեսարանը . իսկ եթէ կեդրոնական՝ ալ նկարագրելու բան չէ :

Ամերիկայի մէջ չի կայ քաղաք մը որ 20, 000 բնակիչ ունենայ , և երկու՝ երեք կամ չորս իւր գլխաւոր լրագիրները չունենայ . իսկ եթէ բնակիչք աճին՝ կ'առաւելուն նաև թերթերը . և կը հաստատեն պաշտօնատունք , մինչև այնպիսի պաշտօններ՝ որ նոյն քաղաքին եօթն հրաշալեաց մին կը համարուին :

Բայց ամերիկացիք ամէն ինչ մեծ և փառաւոր կ'ընեն , առանց նոյն իսկ խորհրդածելու թէ յիրաւի այս ըրածնին մեծ պիտի համարուի . և ինչպէս իրենց յատկութիւնք ծանօթ են ամենուն՝ յայտնի են նաև իրենց գլխաւոր երկու պակասութիւններն որ յատուկ է միայն իրենց ցեղին . այսինքն փափագ և ցանկութիւն նիւթական յաջող կենաց , և գեղարուեստից նկատմամբ ունեցած կոյր անհոգութիւն մը : Եւ այս պակասութիւնը ամէն բանէ աւելի իրենց շարադրած հսկայ լրագրաց մէջ կը տեսնուի . որ թէ Մամմոնի տաճար է և թէ միանգամայն Բարբրոնի աշտարակ . ան :

ճոռնի և կոշտ պատեան մը՝ որ դառն նուշ մը կը բովանդակէ, այսինքն օրագիրը . արդ տեսնենք թէ ինչ է սա :

Միացեալ—Նահանգք՝ Անգղիացւոց և Գաղղիացւոց նման կեդրոնական կամ մայրաքաղաքի լրագրութիւն մը չունին . Նիւ-Եորքի օրագիրը միայն նոյն քաղաքին կը ծառայեն և ոչ այլ ինչ, նոյնը կրնանք բախ նաև Ուոշինկըքնի, Շիգակոյի, Պոսթընի, և Սան Ֆրանչիսկոյի թերթերուն համար . այս ընդարձակ հասարակապետութիւնը, որ իւր ծոցն 80 միլիոն բնակիչ կը սնուցանէ և որ դեռ հարիւրաւոր միլիոններ կրնայ ընդունիլ՝ յիրաւի տարակեդրոնականութեան երկիրն է : Սակայն Նիւ-Եորքի լրագիրը՝ մասամբ ինչ նախագաղափարք կրնան համարուիլ նկատմամբ այլ քաղաքաց . ուստի բաւական կը համարինք քանի մը խօսք զուրցել ամերիկեան այս մայրաքաղաքին մամլոյն գլխաւոր ներկայացուցչաց վրայ :

Նիւ-Եորք Հէրալտը՝ ծանօթ է յԵւրոպա գէթ անուամբ . ահա համառօտիւ նորա պատմութիւնը . յիսուն տարի առաջ՝ կորտոն Պենէդ անուամբ սկովտիացի մը Նիւ-Եորքի պողոտայից մէջ բազդ խնդրելու ելած էր . տեղոյն ժողովրդեան բարձն լաւ մը ուսումնասիրելէն վերջը՝ շատ յանցաւ նոր տեսակ լրագիր մը հաստատեց : կը թուի թէ այն ժամանակ իւր բնածին անգղիական սրամտութեան հետ միացուցած պիտի ըլլայ նաև յանգձնութիւն . վասն զի առանց ամենեկին տարտամելու՝ իւր փոքր լրագրով անձնաւորութեանց ընդարձակ ասպարիզին մէջ մտաւ : Շատ հետաքրքրական և անմիջական եղան իւր այս գործին արդիւնք . վասն զի քանի մը տարի շարունակաբար Նիւ-Եորք-Հէրալտի սիւնակաց մէջ ստէպ կը տեսնուէր « Դեռ խարազանի հարուածներ » վերնագրով յօդուածներ . և յիրաւի այս խարազանի հարուածներն՝ իրապէս կ'ընդունէր ինքը, և իւր ընթերցողաց հետաքրքրութիւնն ևս առաւել գրգռելու համար՝ անխտով կերպով կը հրատարակէր զանոնք :

Այսպէս խարազանաբախութենէ 'ի խարազանաբախութիւն՝ կորտոն Պենէդ հեղինակութիւն ստացաւ և իւր օրագիրն յիրաւի « հարկաւոր թերթ » մը հրատարակուեցաւ . քիչ վերջը սկսան զայն ամէնքն և ամէն տեղ կարդալ . իբր յափշտակիչ և զարմանալի լուրեր հրատարակող՝ իրեն նմանը չունէր . և երբեմն ալ կը յանգըզէր բացայայտ կերպով իւր ընթերցողները ծաղրածել : Օր մը այս լրագիրն երեք չորս սիւն ամենամանր տառերով հրատարակուեցաւ, յոր մանրամասն կը նկարագրէր կեդրոնական փակարանին մէջէն փախած գազանաց միջադէպներն . հուսկ յետոյ նկարագրին ամենէն խորը՝ միայնակ փակագիծ մը կը տեսնուէր ,

յորում միայն հետեւել խօսքերը կային . « Ինչ որ վերը գրուած է՝ ամենահաւատարիմ նկարագրութիւն մ'է որ կրնայ հանդիպել՝ եթէ փակարանին վանդակները զգուշութեամբ չի պահուին , ինչպէս այժմ որ ամենամեծ հսկողութիւն կ'ըլլայ » :

Լրագրոյս ժառանգութիւնը՝ կորտոն Պենէդ հօրմէն՝ անցաւ համանուն որդւոյն , որ նշանաւոր է թէ՛ յԱմերիկա և թէ՛ յԵւրոպա իւր ձիոց վրայ ունեցած սիրով . բայց զինքն իբրև լրագրապետ ծանօթացնող ամենէն աւելի մեծ գործն եղաւ . Ստէնլիի առաքումն յԱփրիկէ . սա արդէն ծանօթացուցած էր իւր անունն անձատման պատերազմին և Եթովպիոյ արշաւանաց առթիւ : Առաւօտ մը Պենէդ կոչեց զայն . Սդէնլի իսկոյն եկաւ և զտառ յանկողնի , վասն զի սովոր էր մինչև կէս օր մնալ անկողնոյ մէջ . — Սդէնլի , պէտք է որ երթամ յԱփրիկէ Լիվինկուդընը գտնելու համար . — Շատ աղէկ : — Ե՛րբ կրնաս մեկնիլ : — Նոյն իսկ վաղը . — Շատ լաւ , ծախքերդ իմ վրաս . բարի ճանապարհ : — Անկողնոյն միւս կողմը դարձաւ , իսկ մնացեալը բովանդակ աշխարհի ծանօթ է :

Առնունք օրինակի համար Նիւ-Եորք-Հէրալտի թերթ մը . 12 էջ , վճարելով երկու տոշ . քննենք պարունակութիւնը :

Ա . էջ . Մանր տառերով և սեղմ շարուած յայտարարութիւններ . երկար , ձանձրացուցիչ և մասնական ծանօթութիւններ : Եւ այս ամէնը անախորժ զանազանութեամբ մը , Յետոյ կու գան « կորուած և զոնուած առարկայից շարքը » , « ամուսնութիւնք , ծնունդք և մահք » , « ժամական ծանօթութիւնք » , « կառք և ձիեր » , « կահ կարասիք » և հուսկ յետոյ եւրոպական պանդոկաց յայտարարութիւնք աստ և անդ ցիր և ցան :

Բ . էջ . Առաջնոյն նման բազմաթիւ յայտարարութիւններ . բայց մասնաւորապէս անշարժ ստացուածոց գնումներ և վաճառումներ . յետոյ մէկ ու կէս սիւնակ թոշակաւոր բնակութեանց ծանուցումներ :

Գ . էջ . Այս էջին մէջ կը սկսին էական խնդիրները . նախ և առաջ վերնագրոց համառօտութիւնը , որ կէս սիւնակ կը գրաւէ . յետոյ այլ և այլ տեղական և արտաքին փոքրիկ ծանօթութիւններ և լուրեր որ շատ հետաքրքրական են :

Դ . էջ . Երեք պատկերազարդ և պատմական սիւնակներ . ինչպէս օրինակի համար . « Դիմակաւոր աւազակներ » կայլն . այս փոպական ոճով կը շարունակէ բովանդակ էջն :

Ե . էջ . Տեղական առօրեայ ամենէն աւելի կարևոր խնդիրներն՝ երեք հարիւրորդամէդր խոշորութեամբ վերնագիր տառերով :

Զ . էջ . Սա ամենէն աւելի հիմնական և էական էջն է . կը

պարունակէ խմբագրական լուրջ յօդուածներն . սակայն այնպիսի ոճով գրուած՝ որ թերևս միայն ամերիկացոյ մը համար հաճելի թուի, իսկ օտարին՝ յոյժ տաղտկալի և նեղացուցիչ :

Է. էջ. Արտաքին գիւանագիտական և քաղաքագիտական խնդիրք :

Ը. էջ. Ձերնթացից, հասարակաց ակմբոց և ժողովատեղեաց ծանուցմունք :

Թ. էջ. Բովանդակ էջը վաճառականական, գործառնական և տնտեսական յայտարարութեամբք լի է. թուոց և անուանց Բարեւոն մը :

Ժ. էջ. Այս էջը գարձեալ լի է առօրեայ միջադէպերով և ախորժեկի ծաղրաբանութեամբք :

ԺԱ և ԺԲ. Ամենամանր տառերով բազմաթիւ յայտարարութիւնք :

Սակայն վերջին տարիներս Հէրալտի դէմ լուրջ նախանձորդ մը ելած է վոյրտ (աշխարհ) տիտղոսով . եթէ հաւատանք այս վերջնոյս ըսածին և իւր յաղթական և ուրախալից գոչմանց՝ կարծես թէ սա գերազանցեր է գոյնէնդ արտաքոյ կարգի լուրեր հրատարակելու արուեստին մէջ, Բայց այս լրագիրն իւր խօսքը երկու կէտի վրայ միշտ կ'ամփոփէ. իւր օրինակաց անհատաւի թիւն՝ և իբր պաշտօնատուն բարձրացուցած ահա գին պալատը՝ որ Նիւ-Եորքի ամէն շէնքերէն քանի մը յարկ աւելի բարձր է : Բայց պէտք չէ զարմանալ որ այս օրագիրն քանի մը տարուան մէջ իւր նմանները գերազանցեց . վասն զի ամերիկեան հասարակութեան բնաւորութեան բարուց և սովորութեանց գաղտնիքն աւելի լաւ ըմբռնեց :

Վորտ թէպէտ ըստ էական մասանց նոյն կրնայ համարուիլ ընդ Հէրալտի՝ բայց փոքր տարբերութիւններ ունի . տասն և չորս էջերէ կը ձևանայ . և 12 և 13 էջերն են որ ամբողջովին յայտարարութիւններ կը բովանդակեն . իսկ միւս մնացած ամէն էջերուն մէջ ալ՝ նոյն իսկ խմբագրական յօդուածոց հետ խառն են ծանուցմունք և մանր տեղեկութիւնք : իսկ լրոց և յօդուածոց ուղղութեան նկատմամբ՝ անընդհատ և շարաշար բանակուութեան՝ մէջ է ընդ Մորնիկնի ժոռնալի (Առաւօտեան լրագիր) և Ռքրորտերի (Քարտուղար) հետ :

Տը Սըն (The Sun, արեգակն) ճարտար խմբագրապետ մ'ունի յանձին Պ. Տանայի . սա իւր տասնի չափ սեղմ էջերուն մէջ թերևս նախընթացներէն աւելի նիւթ կը բովանդակէ : սակայն իւր ուղղութիւնն բնաւ չի փոխեր և ձանձրանալի միակերպութիւն մ'ունի . իսկ իւր բովանդակութեան մէջ՝ այս օրա-

գիւրն եթէ գրական մեծ ցոյց կամ փայլ մի չի ներկայացընէր, սակայն յայտնի կը տեսնուի որ շատ յաջող և ծաղկած գիւրք մ'ունի :

Թերևս խմբագրական յողուածոց նկատմամբ առաջին տեղին գրաւէ Նիւ-Եորք-Դաւյնզ, թէպէտ սա ալ ըստ ամբողջ բովանդակութեան՝ իւր նմանեաց ուղղութիւնն ունի . իւր գլխաւոր արդիւնքն եղաւ մայրաքաղաքին քաղաքական բռնակալ տեսչութեան դէմ մղած պատերազմը, յորում և յաղթող հանդիսացաւ :

Չմոռնանք յիշել նաև զՆիւ-Եորք-քրիպիւն . ըստ ոմանց՝ սա ամերիկեան մեծամեծ լրագրաց մէջ լաւագոյնն է, և ամենէն աւելի կը մերձենայ անգղիական լրագրութեան . իւր խմբագրականը յերաւի լուրջ և ծանր յողուածներ են, և ոչ եթէ միւս լրագրաց նման կարծես աստղանիչ ժանթութիւններ . բովանդակութիւնն՝ յոյժ վայելուչ է . իւր հաստատուելէն քիչ վերջը՝ խմբագրապետի պաշտօնն ստանձնեց Հուեդըլս Ռէյտ, որ յետոյ Միացեալ Նահանգաց կողմանէ դեսպան գնաց 'ի Բարիզ, և 'ի դարձին վերստին յանձն առաւ այս օրագրին ուղղութիւնը՝ կարևոր բարեփոխներ կատարելով :

Ինչպէս արդէն ըսինք, եթէ Նիւ-Եորքի լրագիրք տեղական մասնաւոր կարևորութիւն և ազդեցութիւն մ'ունին՝ սակայն գաւառէն դուրս ամենեկին նշանակութիւն չունին . միայն 'ի քաղաքն և 'ի շրջակայքն կը կարգացուին : Հեռագրութեան և նորագործակալութեանց զարգացումն այնքան մեծ և անհաւատալի է 'ի Միացեալ Նահանգս՝ որ հասարակաց կամ ընդհանուր շահուց վերաբերեալ կարևոր լուր մը՝ գրեթէ մի և նոյն ժամանակ կ'իմացուի հաւասարապէս 'ի Պոսդըն, 'ի Չինչինսագի, 'ի Ռուչինկոզըն՝ ինչպէս նաև գաւառի մը ամենէն խեղճ քաղաքին մէջ :

Կարծեմ թէ ընթերցողաց անհաճոյ չ'ըլլար եթէ այք մը տանք ընդհանուր ամերիկեան մամուլն . յիշենք News, Ledgers, Stars, Arenas, Clippers, Horsemars, Despatches, Bujets, Waves կային : Սակայն այս ամէնն ալ մասնաւոր և եզական յատկանիչ մը չունին : Պատկերազարդ լրագիրք ալ մասնաւոր գովեստի արժանի են . Harper's Weekly քիչ մը ցամաք բայց շատ վայելուչ է . Frank Leslie's Weekly հասարակ ժողովրդեանն է . իսկ բարձրագոյն ընկերութեան՝ Home journal :